№ 5. Փետրվարի 3. 1872 Փետրվարի 3. № 5.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ·

Տարեկան գինն է 7 ռուբլի [illegible] В Тифлисъ, въ Редакціи Армянской Газеты „Мшакъ".

[illegible]

ՄՇԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ·

[illegible]

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

[illegible]

Նորին Կայսերական բարձրութիւն մեծ իշխան փոխարքայն Կովկասի յունվարի 26-ին, երեկոյեան 8 ժամին յաջողութեամբ մտաւ Ս. Պետերբուրգ, իր արտասահմանեան ճանապարհորդութիւնից յետոյ:

Ան՞նք թէ լինինք

I

[illegible]

II

[illegible]

III

[illegible]

IV

[illegible]

V

[illegible]

VI

[illegible]

VII

[illegible]

VIII

[illegible]

IX

[illegible]

X

[illegible]

ՖԵԼԻԵՏՈՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ·

Ներկայացումն յունվարի 24-ին 1872. [illegible]

[illegible]

[illegible]

ZUUՌ-Арм ССР

3618-9-69

Ասենք, թէ վիճակը կամենում է, որ դուք օրինակ մի այնպիսի ուսումնարանի կառավարիչ դառնաք, որտեղ մասնակցում են դարձածները:

Դուք նկատում էք մի վարժապետի, որ նորա ընտրած մեթոդը փոքր ինչ հնացել է, որ նորա տեղը գործ դնելու է այս ինչ նոր մեթոդը:

Դարձած երիտասարդը չէ կարող, իրաւունք չունի ձեզանից խրատ ընդունելու. . . նա իր ուսումը վերջացրած է, ուրեմն մտաւոր կատարելագործութեան նշանակված տիպին հասած է: Նա չէ կարող փոխվել, նա իրաւունք չունի. . . : Նա պարտաւոր է անշարժ մնալ, որովհետեւ նա նշանակված կատարելագործութեանը հասել է:

XI

Մի ուրիշ ուսումնարանում ձեզ շրջապատում են անկատար, ոչինչ չը դարձած մարդիկ:

Նկատեցէք նոցա, ուղղեցէք, ցոյց տուէք... և նոքա կընդունեն, կը փոխեն, կը կատարելագործեն, և կը կատարելագործվին:

Նոցա առաջադիմութեանը սահման չըկայ.—որովհետեւ նոքա ոչինչ չեն դառել և չեն դառնալու. . . :

XII

Ուրիշ օրինակ: Դուք օրագիր էք հրատարակում: Ձեզ բերում են յօդված: Դուք փոփոխութիւններ էք առաջարկում: Բայց գրողը ուսումն աւարտած է, ուրեմն նշանակված սահմանին, տենչացած մտաւոր աստիճանի զարգացմանը հասած է:

Նա չէ կարող փոխվել, ուրեմն և չէ կարող փոխել իր ստեղծվածը.

Նա կամ պիտի տայ անփոփոխ
Կամ պիտի յետ առնի իր գրվածը:

XIII

Միւսը, ինչպէս ասում եմ, կարող է փոխվել, և ուրեմն իր ստեղծածը փոխել. . . : Ինչի՞—Որովհետեւ նա ոչինչ չը դարձած, և ոչինչ չը դառնալով, սահման, չափ չունի իր մտաւոր առաջադիմութեան և կատարելագործութեան մէջ:

XIV

Մէկը ոչինչ չէ դառել կեանքի մէջ. .

Միւսը դառել է:

Առաջինի իրաւունքն է կատարելագործվել. .

Երկրորդի գլխաւոր պարտաւորութիւնն է միշտ անշարժ մնալ:

XV

Շարժումը մեր պարտաւորութիւնն է:

Անշարժութիւնը ձեր իրաւունքն է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԵՄԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԸ ՏՓԽԻՍՈՒՄ.—ՆՐԱ ԱՆՑԵԱԼԸ ԵՒ ՆԵՐԿԱՅՆ.

Հայկական բեմական արհեստը Տփխիսում սկսվում է 58 թ. և շարունակվում է (թէ և շատ անկանոն) համարեա թէ մինչև էս օր: Ուրեմն նա ապրում, արդէն 13 տարի և սրանով քաղաքականութեան իրաւունք է ստանում կենդանի մնալու և ապրելու. մեզ էլ իրաւունք է տալի մեր ուշադրութիւնը դարձնելու դէպի նրան: Գցենք ուրեմն դեռ մի հարևանցի հայեացք դէպի հայկական բեմական արհեստը Տփխիսում և տեսնենք թէ ինչ հանգամանքների ժամանակումն է հիմնուել, ինչ փոփոխութեան է ենթարկվել, ինչ դրութեան մէջ է և ինչ է հարկաւոր նրան այժմ:

Հայկական թատրոնը իրան հիմքը դնում է հէնց էն տարիներում, երբ ռուսահպատակ Հայերը սկսւումն մտաւորապէս շարժվել: Այն յառաջադիմութեան հոսանքը, որ տիրել էր բոլոր ռուսական ժողովրդին, որի հետեւանքները եղան այժմեան կայսրութեան վերանորոգութիւնները (ինչպէս հաստատումեն և ռուս գիտնականները) երևի այդ ընդհանուր հասարակական շարժուածքը ներգործութիւն ունեցաւ և խորը, անհոգս քնած Հայի վերայ: Ինչ և լինէ այս փաստ է, որ այս ժամանակում խոր քնած Հայն սկսում է շարժվել, փոքր ինչ տրորում է իրան երկար քնից, ծպռտած աչքերը. հիմնում է այս տեղ և այն տեղ ուսումնարաններ և մի քանի օրագիրներ. Պէտք է խոստովանած որ այս ուսումնարաններից շատերը մեր կեանքի էս ժամանակի պահանջմունքներին համապատասխանեցին (գլխաւորապէս լեզու սովորացնելով). իսկ օրագիրներից շատերը դեռ քնից չէին սթափվել: Նրանք ննջելով բաւականանումէին միայն սպիտակ թղթի երեսը սևացնել և շուտով անյիշատակ յաւիտենականութիւն փոխվել: Բայց աչքով և կենդանի մտքով միայն երկու օրագիր են հանդէս գալի, սրանից մինը և աւելի յաջողակը (Հիւսիսափայլ) հէնց այն ժողովրդի մէջն է դուրս գալի (Մոսկվայ) որից՝ առումեմ, երևի ստացել էինք մի թոյլ հարուած: Այս օրագրութիւնները մեր գրականութեան մէջ հիմնում են մի բացասական ուղղութիւն:

Սրանք գրականութեան մէջ պաշտպանում են մեր աշխարհաբառ լեզուն այն հնամոլ գիտնականների դէմ, որոնք աշխատումէին և պնդում մտցնել հին գրաբառ և անհասկանալի լեզուն մեր վերանորոգվող նոր կեանքի մէջ: Այս հարցը գործնական կերպով Հիւսիսափայլը վճռեց: Խօսումէին նմանապէս մեր հոգևորական դասի տգիտութեան վերայ, նրանց առաջարկումէին կրթութիւն ուսում, մեր ուսումնարանների աներջանիկ դրութեան օգնութիւն հասցնելու համար, առաջարկում էին վերանորոգութիւն: Մեր առօրեայ ընտանեկան կեանքը, որ մինչև էս ժամանակները գրականութեան նիւթ չէր համարվում մեզ համար, մտնում է գրականութեան մէջ: Բայց այս նախանձելի դրութիւնը մեզանում երկար չի շարունակվում. գրողների թիւը օրէց օր պակասում է, օրագիրների մտաւորական և նիւթական միջոցները հատնում են.—հնութեան դէմ պատերազմելը անհնարին է լինում. խմբագիրները հաշտութիւն են առաջարկում, օրագրութիւնները դադարեցնելով: Հայն իրան սովորական քունն է մըտնում, մինչև էս օր էլ լաւ քնած է, ու զոռ չի տալի ոչ իրա խելքին, ոչ իրա մտքին, ասելով, ես գործնական վաճառական մարդ եմ, ինձ ինչ հարկաւոր է խելքը, միայն ես նիսիա գրել գիտենամ:

1858—1854. թ. ուրեմն միայն եօթը տարի հայկական օրագրութիւնը ունեցաւ փառաւոր կեանք *). այն օրից մինչև հիմայ Հայն անհոգս է: Պատճառը (պատասխանելու ժամանակը չէ, մենք մեր առարկայից հեռանում ենք):

Հայկական թատրոնն էլ Տփխիսում հէնց էս ժամանակն է (58 թ.) սկսվում, երբ Հայի գրգռված միտքը, Հայի օրագրութիւնը հանդէս է գալի: Նա իրան ներկայացումները տալիս է առաջ Ներսիսեան ուսումնարանի (հին) ընդարձակ դահլիճում: Այդ ուսումնարանի համար ապականութիւն համարելով, մեր հոգաբարձների միջնորդութեամբ, հայկական բեմը զրկվում, այդ ամենայարմարաւոր դահլիճից: Սրանով թատրոնը չի դադարում, նա շարունակվում է փոյնաչարի երբեմն երբեմն իրան ներկայացումները Վարդան Շերմազանեանցի դարպասումտալով: Պիեսաները լինում են զանազան կոմէդիաներ. գլխաւորապէս պ. Միք. Պատկանեանցի գրուածները Տփխիսու հայ ընտանեկան կեանքից վեր առած: Այս դրութիւնը շարունակվում է մինչև 1862 թ. վերջերը, երբ Ներսիսեան ուսումնարանի դահլիճի ներկայացողներից մի քանի անձինք (գլխաւորապէս պ. Մատինեան, Ամերիկեան և Սուքիասեան) հաւաքելով իրանց չորս կողմը ցանկացողներին մի փոքրիկ խումբ են կազմում մի քանի անձանց կողմնակի օգնութեամբ, այս խումբը կարողանում է Տփխիսու քաղաքական բեմի վերայ տալ „Արշակ", „Սամէլ", „Դալալ Ղազօ" և ուրիշ պիեսաներ: Մի քանի ժամանակից յետոյ (1863 թ.) էն ժամանակվայ գոլովան, հրաման է առնում տեղական իշխանութիւնից շաբաթը մի անգամ հայերէն ներկայացում տալու համար հասարակական բեմի վերայ: Այնու հետև ներկայացումները աւելի կանոնաւոր են գնում և աւելի կեանք են ունենում: Ժողովուրդը հետաքրքրվում է իրա ներկայովը և ոգևորվում է իրան անցեալովը. նա յաճախում է գնալ անդադար թատրոն իրան և նախնիքների պատկերները և լաւ ու վատ գործունէութիւնը տեսնել բեմի վերայ: Հայ կինաները ու երեխերքը հայոց երգերը . . . . թատրոնից հանելով Տփխիսու քուչա քուչա երգելով մանէին գալի ու հրատարակում: Արդէն կազմվում է թատրոնական երկսեռ խումբը (տ. Մէլէք-Նազարեան, Եղ. Աբրահամեան, Մատինեան, Ջմշկեան Ամերիկեան, Շահխաթունեան Սուքիասեանց և այլն): Սրանցից շատերը ցոյց էին տվել իրանց բեմական տաղանդը. Մատինեանցը և Սուքիասեանցը կոմիկական դերերում Շահխաթունեանցը ու Ջմշկեանցը դրամատիկական. իսկ Ամերիկեանցը էգ միջոցում համարվումէր երկուսումն էլ, ինչպէս դրամատիկականում. էնպէս էլ իսկ յետոյ կոմիկականում: Բայց այս դրութիւնը երկար չի շարունակվում. երկպառակութեան պատճառով բաժանվում է երկու խումբ: Միրիմանեանի և Իզմիրեանի խումբ անուններով: Իզմիրեանցի խումբ ասածը շուտով քնումէ: Միրիմանեանցի ասած խումբը (Ջմշկեան, Ամերիկեան, Սուքիասեան) 64-ից շարունակում է ներկայացումները ինքնուրոյն, առանց կողմնակի օգնականութիւնների:

Այս ժամանակից սկսուած ներկայացումները նոր ուղղութիւն են ստանում. նրանք աւելի մօտենում են բնականին. Ներկայացնվում են ժողովրդական կեանքից առնուած գրվածները «Քյաւռ», «Գիշերվայ սաբրը խէրէ», „Մօցիքուլ", „Թատրոնաշէն», «Վարժապետ», «Դալալ Ղազօ» և այլն. և ռուսերէնից թարգմանութիւններ, „Свадьба Кречинскаго", „Не въ свои сани не садись": 1865 թ. սրանց վերայ աւելանում են եւրոպական դրամաներ. „Էրնանի" „Վենետիկի վաճառական", „Լուկրեցիայ Բորջիա" և այլն գրվածները: 1866 թ. պ. Սունդուկեանի „Խաթաբալան" բոլորովին նոր զարկ տուեց թէ դերասանների խաղին, և թէ թատրոնական ուղղութեանը, որ է Թիֆլիզի վաճառական դասի տիպեր: Պ. Սունդուկեանցը և հանգուցեալ բժիշկ տէր Գրիգորեանցը տարէց տարի աւելացնում են մեր թատրոնական պիեսաները, որոնց մէջ առ հասարակ դուրս էին բերվում հայ շահասէր վաճառականները, նրանց շռայլ և ունայն կեանք վարող կանայքը, հայ կիսակիրթ երիտասարդը և օրիորդը: Հետզհետէ դերասանների խաղն էլ գրուածների հետ միասին ստացան ուղղութիւն:

Բայց էն ժամանակը, երբ բեմը կատարելագործվում է և հարստանում նիւթի կողմից, միևնոյն ժամանակն նա աղքատանում է միւս միջոցներով: Հայոց բեմական արհեստը չէ կարողանում . . . . առաջվան պէս կանոնաւոր ներկայացումներ տալ Տփխիսու հասարակական բեմի վերայ:

— Ինչո՞ւ

— Չեմ գիտում:

Այն ժամանակից տաղանդաւոր ներկայացողների թիւը օրէց օր պակասում է. հաւատարիմ են մնում գործին միայն երկուսը, պ. Ջմշկեանը և պ. Ամերիկեանը, սրանք այս ժամանակից, 1866 թ. վայնաչարի գործը շարունակումեն մինչև էս օր, միշտ կազմելով նոր նոր անդամներից խումբ: Բայց սրանց աշխատանքը երբեմն անտանելի էր լինում: Այս պարոնները ամէն մի ներկայացում տալու համար հազար անգամ վազում էին սորա, նորա մօտ բեմը խնդրելու. . . . . որ կարողանան տարէն մի կամ երկու անգամ ներկայացում տալ հասարակական բեմի վերայ. . . . .

. . . .

Երբեմն էլ նրանք հարկադրված էին լինում զանազան մասնաւոր դահլիճներում կամ կլուբներում ներկայացումը տալ. և բեմը թափառականի պէս Տփխիսու էս քուչումը, կամ էն քուչումն էր երևում. Էս փոփոխական դրութիւնը վատ ներգործութիւն ունեցաւ հայկական բեմի վերայ, նա օրէց օր թուլանում է և ընկնում, նայելով որ երբեմն հայկական բեմի վերայ դուրս էին գալի „Պէպօ" և „Էլի մէկ զոհ" գրվածներին նման պիեսաներ. որոնցով ժողովուրդը շատ հետաքրքրվում էր: Էսպիսի դժուար դրութիւնից միայն մի ելք կայ, այն է, Հայերին հարկաւոր է իրանց համար մի առանձին շինութիւն ունենալ: . . . . Ամենայարմարաւոր տեղն էր էն տունը, որի մէջ սկսվեց հայկական բեմը. խօսքս Ներսիսեան հին ուսումնարանի ընդարձակ և դեռ էն ժամանակը պարապ դահլիճի վերայ է: Մեր դերասանները դիմեցին ուսումնարանի հոգաբարձութեանը դահլիճը վարձելու համար. բայց հոգաբարձութիւնը երկար դատելուց յետոյ վճռեց. բացասել դերասաններին և տալ դահլիճը երաժշտական ընկերութեանը *) „Մշակ" լրագրի № 3—1872 թ. մէջ պ. Հ. նկատում է, ինչպէս յայտնի է „Մշակի" կարդացողներին, թէ „հայերը և վրացիները, համարեա 10 տարի թափառելով մէկ դահլիճից միւս դահլիճ, այսպիսի մեծ հարուստ հայ-վրացական քաղաքի մէջ, չը կարողացան վերջապէս մէկ մշտական դահլիճ որսնել իւրեանց համար, որտեղ որ կարողանային կանոնաւորել թատրոնական վսեմ արհեստը":

Խօսքս ուզումեմ վերջացնել նրանով. գլուխ գալու բան է արդեօք տեղական վերև նկատած, հայ և վրաց թատրոնը Տփխիսում թէ ոչ: Ամէն միջոցները մեզ իրաւունք են տալի ասելու այո: Բայց կարելի է մեզ պատասխանեն թէ արդէն Տփխիսում կան կանոնաւոր իտալական և ռուսաց բեմ. թատրոն գնացողները արդէն գնում են այն տեղ, էլ ինչ հարկաւոր է մեզ հայ և վրաց թատրոն": Այսպիսի մի պատասխանը կարելի է ասել անհիմն է և այդ կը նշանակէ չը ճանաչել տեղիս ժողովրդի ճաշակը: Կան իրաւ այդ ներկայացումները, որոնք ունեն արդէն իրանց որոշեալ դրութիւնը և իրանց մաս ժողովուրդը, բայց էդ չի նշանակել թէ, մի և նոյն ժամանակը իտալական և ռուսաց ներկայացումների հետ չեն կարող լինել, հայ և վրաց ներկայացումներ. դրանց մինը միւսին չի հակառակել, այլ ընդհակառակը մինը միւսի պակասութիւնը կը լրացնէ և օգնական կը հանդիսանայ: Էսպիսի օրինակ մենք տեսնում ենք Պետերբուրգում, որ տեղ բացի ռուսաց և իտալացւոց բեմից, կան գերմանացւոց և Ֆրանսիացւոց բեմեր, սրանց մինը միւսին բոլորովին արգելք չի լինում: Ամէն մի բեմը ունի իրան ժողովուրդը. և ռուս թատրոն գնացողը, հազիւ է գնում գերմանացւոց կամ Ֆրանսիացւոց թատրոնը և փոխադարձ: . . . .

. . . .

Մեզ հարկաւոր է տեղական բեմ ունենալ: Մենք բեմի վերայ կարողենք տեսնել մեր հին ու նոր կեանքը, նրա լաւ և վատ կողմերը, մենք բեմից կենդանի ձևով և լեզվով կը տեսնենք էնպիսի բաներ, որ ուրիշ միջոցով չէինք կարող, ու փոխանակ երկար գիշերներ տանը նստելու օրօչ տալով, թուղթ խաղալով, ընտանիքի հետ կռւիւ վարվելով, անտանելի և երկար գիշերներ անօգուտ անցկացնելու տեղ. թատրոնում կարող էինք օգտաւէտ ժամանակ անցկացնել, մտաւորապէս և բարոյապէս կրթելով մեզի:

Վերջին խօսքերս դարձնում եմ մեր դերասաններին. էլ գործը յետ գցելու ժամանակը չէ, պէտք է հետեւած առածին, թէ „էսօրվան գործդ էգուցվան մի գցի". յանձնառած գործը հարկաւոր է աշխատել, առանց ուշացնելու գլուխ բերել—արդէն ժամանակ է գործնական կերպիւ վճռելու Հայոց վրաց թատրոնի գործը անյապաղ: Նիւթական պակասութիւնները երևի կարելի է հոգ տանել:

Վ. Ճ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուս „Одесскій Вѣст." լրագրին հաղորդում են Թէօդոսիայից, որ նախկին Խալիբեան ճեմարանը պիտի դառնայ Հայ-հոգևոր դպրոց և տեղափոխվելու է շուտով, չը նայելով վատ կլիմային և մեծ ծախսերին Նոր-Նախիջևան քաղաքը.

„Одесскій Вѣст." լրագիրը Փոթու, 27—28 դեկտեմբերին պատահած հրդեհի մասին հաղորդում է յետագայ մանրամասնը. հրդեհը ոչնչացրեց Րիոնի ափին գտնված մինչև 80 խանութ. Վնասվեցաւ շատ ապրանք, այսինքն, ապրեշումի կոկոնները, բամբակը, բուրդը հակերի մէջ. Նամակագիրը կարծում է, որ կորուստի արժողութիւնը հասնում է մինչև 200,000 ռուբլի, չը հաշվելով շինութիւնների և քանի մի ուրիշ փչացած ապրանք-

---

*) 1864 թ. նուազվումէ և ռուս առաջադէմ մտքի առաջնորդների թիւը.

*) Էս մի քանի ամիս առաջ լսեցի, թէ պ. դերասանները պէտք է դահլիճ վերցնեն երաժշտական ընկերութիւնից և թէ դրա համար նրանք արդէն մի գումար են կազմել.